րում կը յորդորէր Ասորոց Պատրիարքըն որ համաձայնի իրեն հետ ծէսերով և արարողութեամբ, որոց պատճառաւ խել ինքն Անգլիոյ եկած է։ Կը յայտարարէր Քանթըրպերի, որ ինքն կը յուսայ, որ երբ Ամեն. Պատրիարքն Արեւելս դառնայ, անպատճառ իրեն հետ պիտի կրէ այն ազդեցութիւնն կամ տպաւորութիւնն, զոր տեսաւ Անգլիոյ եկեղեցւոյն եւ բնակչաց մէջ, այն է զուտ քրիստոնէութիւն, առաքելական հաւատ և գթութիւն, որ պատճառ է բնակչաց լուսաւորութեան։ Քանթըրպերի յաւել նաեւ՝ թէ ինքըն կը ճանաչէ Յակոբեան ուղղափառ Ասորիներն և գիտէ այն անհամաձայնութիւնն կամ տարբերութիւնըն, որով Ասորոց եկեղեցին կը բաժնուի Անգղիականէն և ուրիշ քրիստոնէական եկեղեցիներէն, ծանօթ է իրեն նմանապէս, որ ինչ ինչ ուսմունքներ որ բողոքական Ասորոց կը պատկանի և Անտիոքին մէջ հերքուած է, դուք կըսէք թէ սուտ է։ Ուստի կը յուսայ անկասկած որ կը միանայ Քրիստոսի եկեղեցին և դուք Ասորիքդ կը գաք Եւրոպայ միութեան գործն անօրինելու, որ է հաճոյ ամենայն քրիստոնէից։

Այն բանախօսութեան թարգմանն էր Տէր Մարգարն, որ Պատրիարքի հետ էր։

## ԵՂԵՌՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Բեթլէհէմի Տեսուչն կը գրէ.

«Երէկեան օր Քառասնից պահին մէջ, Թղենեաց տակ, Յունաց գաւառութենէն կին մի պարտէզն գընացած լինելով իւր էրկան աշխատելու համար յատուկ բոյս մի որոնելու համար, կըսպանուի։

Սպանողն կ՚աշխատի խեղճ կնոջ ճակտի ակներն յափշտակելու, և կինն կը դիմադրէ ամենայն զօրութեամբ։ Եղեռնագործն տեսնելով որ հնար չը կայ, իսկոյն դաշոյնն կը հանէ, կնոջ վիզն կիսով չափ կը կտրէ, աչքերն կը հանէ, քիթն կը ծակէ, կուրծքն կը ձեղքէ, ականջներն կը կտրէ, թեւերն կը ձեղքէ, մինչեւ որ կը յաջողի անշնչացնել և ակներն յափշտակել։ Սպանման ժամանակն ճիշդ յայտնի չէ, միայն թէ ժամն 11 ին քանի մի աղջկունք շրջագայութեան ժամանակ խեղճ կնոջ դիակն կը գտնեն ծառի տակ, լուր կը տան և իսկոյն իւր տունըն կը տարուի»։

Այս եղեռնագործութեան մասին Բեթլեհեմի բնակիչք հանրագրութեամբ խնդրագիր մատուցած են Երուսաղէմի Պատրիարքարանաց՝ եղեռնագործն գտնելու համար իրենց ազդու միջամտութիւնն գործ դնել։

Տեղւոյս Կառավարութիւնն զօրականներ հանած է զանազան կողմեր. բայց երկու շաբաթ անցած է և տակաւին եղեռնագործն գտնուած չէ։

digitised by A.R.A.R.@